— Միթէ՞ նրանք չեն տեսել:

— Չեն տեսել. այդքան մօտիկ են ապրում եւ չեն տեսել:

— Դա շատ զարմանալի է:

— Զարմանալու ոչինչ չկայ. ես աւելի զարմանալին կասեմ ձեզ. ինձ պատահել է տեսնել գիւղացիներ, որոնք մի քանի մղոնով միայն հեռու էին ապրում մի վանքից, երբ օտար երկրներից եկած ուխտաւորների քարաւանը նրանց գիւղի մօտով անցնում է, նրանք խորին բաղձանքով ասում են ուխտաւորներին. «Երանի՜ ձեր աչքերին, որ կը գնաք, կը տեսնէք մեր վանքը»...

Այդ խօսակցութեան միջոցին մեր առաջնորդի միւս ընկերն էլ մօտեցաւ մեզ: Ես այժմ միայն սկսեցի ուշադրութեամբ քննել նրանց դէմքերը: Այդ դէմքերը ինձ շատ ծանօթ էին երեւում: Ինձ թւում էր, թէ մի տեղում պէտք է տեսած լինէի նրանց: Բայց ե՞րբ եւ ի՞նչ տեղում, մտաբերել չէի կարողանում: Այդ տարակուսանքը երկար տանջում էր ինձ: Միթէ՞ կարելի էր մոռանալ այդ տեսակ մարդկանց: Երկուսն էլ բարեկազմ երիտասարդներ էին, կարծես մի զոյգ Այաքսներ լինէին: Ես անիծում էի իմ բթամտութիւնը: Եթէ տեսել էի, անպատճառ պէտք է ուրիշ հագուստով, ուրիշ կերպարանքով տեսած լինէի, եւ ոչ որպէս այժմ, լազի հագուստով, ինչպէս հագնուած էին Արթինի բոլոր ծառաները:

Ես տատանւում էի անստուգութեան մէջ: Մտածում էի հարցնել: Միթէ՞ նրանք կասէին, թէ ովքեր են, կամ մենք մի ժամանակ տեսնոել ենք: Եթէ ասելու լինէին, հէնց առաջին անգամից կասէին: Բայց նրանք ոչինչ կերպով չէին ցոյց տալիս, որ ինձ ճանաչում են, կամ որեւիցէ ժամանակ հանդիպել ենք միմեանց: Իմ յիշողութեան մէջ այդքանը միայն պարզ էր, որ այդ երկուսին միասին, միաժամանակ մի տեղում էի տեսել: Եւ այդ շատ զարմացնում էր ինձ. ես թողեցի, որ հանգամանքները պարզեն այդ մթութիւնը, այժմ դարձայ դէպի միւս ընկերը, հարցնելով.

— Դեռ երկա՞ր ճանապարհ է մնում մինչեւ Հայկայ բերդը:

— Եթէ այդպէս արագ գնալու լինենք, կէսօրից փոքր-ինչ անցած կը հասնենք, — պատասխանեց նա:

Իմ հետաքրքրութիւնն այնքան անզուսպ էր դարձել, որ ցանկանում էի նախքան բերդը տեսնելը նրա մասին տեղեկութիւններ ստանալ:

— Դուք տեսե՞լ էք Հայկայ բերդը, — հարցրի նրանից:

— Տեսել եմ: